

S. Տաթև եպիսկոպոս Յակոբեան

Տրանսիլլանիայի Հայութեան պատմութիւնը՝ պայմանաւորուած այս երկրամասի պատմութեամբ, դարեր շարունակ յարաբերուել է Ռումինիայի ու Աւստրո-Հունգարիայի պատմութեան հետ:

Հայերը Արեւելեան Եւրոպայի տարբեր կողմեր, այդ թւում եւ՝ Տրանսիլլանիա գաղթել են սկսած ԺԱ.-ԺԳ. դարերից Անի-Ղրիմ-Ակքերման ճանապարհով: Այս հոսքն ուժեղացել է յատկապէս Անիի անկումից յետոյ: Ինչպէս նշում է Ս. Քոլանջեանը, Ժ.-ԺԱ. դարերից սկսած արդէն Հայկական որոշակի ներկայութիւն է եղել Տրանսիլլանիայում, որի վկայութիւնն են armean (o'rmen) անուանումը ունեցող մի շարք տեղանունները: Վաղ շրջանի գաղթականութիւնը հիմնականում ձուլուել է: Ժէ. դարի սկզբից սկսուել է Հայերի նոր հոսք դէպի Տրանսիլլանիա: Յիշատակելի է յատկապէս 1654 թ. Մոլդաւիայից այստեղ որոշակի թուով Հայերի փոխադրումը¹:

Հայկական հոծ Համայնքը, սակայն, ձեւաւորուել է 1672 թ., երբ Մոլդաւիայում տեղի իշխանները կրօնական Հալածանք ծաւալեցին Հայերի դէմ՝ պահանջելով դաւանափոխ լինել: Հայութեան մի զգալի մասը հեռացաւ Մոլդաւիայից, եւ մօտ երեք հազար ընտանիք բնակութիւն Հաստատեց Տրանսիլլանիայում²: Հայերի՝ այստեղ

Հաստատուելուն նպաստեց նաեւ տեղի իշխան Միքայէլ Աբաֆիի՝ 1672 թ. Հայերին Տրանսիլլանիա հրաւիրելը եւ մի շարք արտօնութիւններ շնորհելը: Այս նոյն իշխանը 1680 թ. Հայերին նոր առանձնաշնորհումներ տուեց, իսկ դարավերջին Աբաֆի Բ. իշխանը վերահաստատեց այդ իրաւունքները³:

Հայերը ոչ միայն ցրուեցին այս երկրամասի տարբեր բնակավայրերում, այլեւ կենտրոնացան չորս քաղաքներում, որոնք անուանուում են նաեւ Հայաքաղաքներ՝ Գեռլա (Armenopolis), Եղիսաբեթուպոլիս (Դոմբրուեն), Զուրջով (Գէորգեն), Սեպուիզ (Յրումոսաս):

Այս Հայաքաղաքներից Գեռլան, որը կառուցուել է նոյնանուն բնակավայրին կից, սկզբնապէս ամբողջովին Հայկական բնակչութիւն է ունեցել: Քաղաքի կառուցմանը ձեռնամուխ է եղել Հռոմում ուսանած Օգոստինոս Վրդարեանը՝ նպատակ ունենալով Տրանսիլլանիայի տարբեր բնակավայրերում ցրուած Հայերին յետագայ ձուլումից եւ ուժացումից փրկելու համար կենտրոնացնել այս քաղաքում: Քաղաքի հիմնարկման աշխատանքները սկսուել են 1700 թ., Աւստրո-Հունգարիայի կայսր Լէոպոլդի տուած հրովարտակով: Ենորհիւ այստեղ կենտրոնացած միատարր Հայ բնակչութեան, Գեռլան դառնում է Տրանսիլլանիայի Հայապահպանութեան գլխաւոր պատուարներից մէկը:

Տրանսիլլանիայում Վրդարեանի երկրորդ կարեւորագոյն ձեռնարկումն էր

տարբեր բնակավայրերում ցրուած Հայ կաթողիկէ Համայնքի ազգաբնակչութեանը երկրամասի միասնական Հայ կաթողիկէ Համայնքի եպիսկոպոսական առաջնորդութեան ներքոյ միաւորելը, որով տարբեր բնակավայրերի Հայ կաթողիկէ քահանաները նուիրապետօրէն սկսեցին ենթարկուել եպիսկոպոսական աթոռի բարձրացած Վրդարեանին⁴:

1715 թ.՝ նրա վախճանումից յետոյ, սակայն, առաջ եկած տարածայնութիւնների պատճառով նոր առաջնորդ չընտրուեց, ապա եւ վերացուեց տեղի Հայկական եպիսկոպոսական աթոռը, եւ ԺԸ. դարի կէսերից Տրանսիլլանիայի Հայութիւնը Հետեւողականօրէն սկսեց պայքարել Հայկական առանձին առաջնորդութեան վերականգնման համար:

Մխիթարեան միաբանութեան հիմնադրումից յետոյ՝ ԺԸ. դարի սկզբից, գնալով սերտացան կապերը նախ Վենետիկի, ապա եւ Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնների հետ: Սա բացատրուում էր երկու Հանգամանքով. նախ՝ Ժէ. դարավերջից կաթողիկէ եկեղեցուն դարձած Տրանսիլլանիայի Հայութիւնը ցանկանում է եկեղեցական առաւել սերտ կապեր ունենալ Մխիթարեան միաբանութեան հետ, որպէսզի վերջինիս Հոգեւորականները՝ որպէս հովիւներ, սպասաւորեն իրենց մօտ: Երկրորդ՝ այս սերտացմանը նպաստում է նաեւ այն, որ Վենետիկը մինչեւ 1848 թ. գտնուում էր Աւստրո-Հունգարական կայսրութեան կազմում, ինչն առաւել էր դիւրացնում սերտ կապերի Հաստատումը: 1848 թ. յեղափոխութիւնից եւ Իտալիայի վերամիաւորումից յետոյ նոյն այս Համաբանութեամբ Տրանսիլլանիայի Հայերը արդէն եկեղեցամշակութային կապերը սերտացնում են Վիեննայում գտնուող Մխիթարեանների հետ:

Մխիթարեանների ու Տրանսիլլանիայի Հայութեան կապերին եւ յատկապէս այդ կապերի սկզբնաւորմանն ու առնչութիւններին մանրամասնաբար անդրադարձել է Հ. Գ. Գովրիկեանը Գեռլայի Հայութեանը նուիրուած իր մեծարժէք ուսումնասիրութեան «Մխիթար Աբբա, Մխիթարեանք ու Հայաքաղաք» բաժնում⁵:

Մխիթարեանների դիւանական վաւերագրերի հիման վրայ Գովրիկեանը գրում է, որ Մխիթար ԱբբաՀայրը 1722 թ. Գեռլա եւ ապա 1728 թ. Եղիսաբեթուպոլիս է ուղարկում մխիթարեան վարդապետներ⁶:

Տրանսիլլանիայի Հայութեան մասին առաջին ամփոփ նկարագրութիւնը Վիեննայի Մխիթարեան Հայերից կատարել է Հ. Վարդան վարդապետ Ըստկարեանը «Եկեղեցական պատմութիւն Հանդերձ ազգային-եկեղեցական պատմութեամբ» աշխատութեան «Դրանսիլլանիայի ու Մաճառստանի Հայք» բաժնում: Յետագայում միաբանութեան արբաՀայր դարձած մխիթարեան վարդապետն այս գործում նախ ներկայացնում է Տրանսիլլանիայի Հայոց թեմի Հռոմէական եկեղեցուն ենթարկուելու պատմութիւնը:

Սկսած Ըստկարեանի՝ 1872 թ. հրատարակուած այս աշխատանքից, Տրանսիլլանիայի Հայ կաթողիկէ Համայնքի մասին գրող բոլոր մխիթարեանները որպէս առաջնահերթ կարեւորութիւն նշում են տեղի Հայութեան առանձին եպիսկոպոսական աթոռ ունենալու անհրաժեշտութիւնը, որին որպէս թեմական կառոյցի մաս պէտք է ենթարկուէին ոչ միայն Տրանսիլլանիայի առաւել մեծ թուով Հայ բնակչութիւն ունեցող քաղաքները, այլեւ մնացեալ բնակավայրերի Հայերը: Անգամ անցեալի դէպքերի շարադրանքում որպէս արդիական հնչեղութիւն ունեցող մի Հարց է արժարժուում

1 Ս. Քոլանջեան, Տրանսիլլանիայի հայերի պայքարը ազգային ինքնորոյնութեան պահպանման համար (ԺԷ. դ. վերջից մինչեւ Ի. դարի սկիզբը). «Էջմիածին», 1964, թիւ ԺԲ, էջ 37:
2 Տե՛ս Ս. Քոլանջեան, Գեռլա Հայաքաղաքը եւ նրա հայերէն ձեռագրերի ժողովածուն. «Բանբեր Մատենադարանի», թիւ 6, Երեւան, 1962, էջ 499:

3 Հ. Գրիգոր Գովրիկեան, Դրանսիլլանիոյ հայոց Մետրապոլիսը, Վիեննա, 1886, էջ 16:

4 Նոյն տեղում, էջ 116-133:

5 Նոյն տեղում, էջ 160:
6 Նոյն տեղում, էջ 160-161:

այս խնդիրը: Այսպէս, 1715 թ.՝ Օգսենտիոս Վրդարեանի մահից յետոյ, եկեղեցական կառավարման առումով ստեղծուած իրավիճակի մասին Ըստկարեանը գրում է. «Եպիսկոպոսական աթոռը դատարկանալով, Դրանսիլուանիայի ուղղափառ Հայք՝ Հոնտեղուան լատին եպիսկոպոսին իրաւաբանութեան ներքեւ մնացին: Բայց իրենց ազգային հայածէս քահանաներն ունէին, որոնք Լեմպերկ կամ Հոնոմ Ուրբանեան դպրոցն իրենց կրթութիւնն ու ձեռնադրութիւնը կ'ընդունէին: Առաքելական գահն ալ ժամանակ ժամանակ այցելուներ կը խաւրէր, որոնք ուղղափառ հաւատոյ անարատ պահպանութեան վրայ կը հսկէին»⁷:

Մխիթարեան վարդապետը ներքին մի հպարտութեամբ է նշում, որ Տրանսիլուանիայի հայութիւնը «եկեղեցական պաշտամանց ու արարողութեանց մէջ ազգային լեզուն ու ծէսը քիչ շատ փոփոխութեամբ պահած են: Պատարագը մեծաւ մասամբ հայոց պատարագին հետ նոյն է, միայն մէկ քանի բան Լատինացւոց (Դոմինիկեանց) Պատարագամատուցէն առած են»⁸:

Տրանսիլուանիայի հայութեան պատմութիւնը ներկայացնելուց յետոյ յիշեալ գործում, թէ՛ անցեալի եւ թէ՛ ժամանակի եկեղեցական-համայնքային ամենակարեւոր հարցն է համարուում առանձին եպիսկոպոսական աթոռի հիմնումը, որպէս հայապահպանութեան գլխաւոր երաշխիք. «Անտարակոյս է, որ Դրանսիլուանիայի հայոց թէ՛ ազգայնութիւնն եւ թէ՛ լեզուն պահելու եւ յառաջացնելու միակ միջոցն է ազգային եպիսկոպոս մը ունենալը, որուն քանի մը տարի է ի վեր շատ ետեւէ ինկած են ի մասնաւորի Կերլայի ու Եղիսաբեթուպոլսոյ Հայ հասարակութիւնները, բայց իրենց ջա-

նից ինչ հետեւութիւն ունենալիքը դեռ չի գիտցուիր»⁹:

Վերջին այս խօսքերից երեւում է, որ Ըստկարեանը որքան էլ կարեւորում է եկեղեցական-թեմական առանձին կառոյցի ստեղծումը հայապահպանութեան համար, այնքան էլ թերահաւատօրէն է վերաբերւում այս հարցի հնարաւոր լուծմանը:

Տրանսիլուանիայի հայութեան պատմութեան հետազոտողն ու նրա ազգային-եկեղեցական շահերի անխոնջ պաշտպանն էր Հ. Գրիգոր Գովրիկեանը՝ ծագումով այս երկրամասից, ով եւս այնուհետեւ դարձաւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ընդհանուր արքահայրը՝ իր այս ընտրութեամբ, ինչպէս կը տեսնենք, մեծ ցնծութիւն պատճառելով Տրանսիլուանիայի հայութեանը:

Գովրիկեանը տեղի հայութեան մասին գրել է երկու գիրք եւ մի քանի տասնեակ յօդուածներ: Այս գործերից առաջինը նուիրուած է Եղիսաբեթուպոլսին եւ ունի հետեւեալ ծաւալուն վերնագիրը. «Հայք Յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ. Այս գաղթականութեան պատմութիւնը քաղուած Դրանսիլուանիոյ իշխանաց եւ Աւստրիոյ կայսերաց առանձնաշնորհութեանց կոնդակներէն, ժամանակակից արձանագրութիւններէն եւ պաշտօնական գրութիւններէն. 1680-1779»:

Ինչպէս ընդգծուած բուն վերնագրին յաջորդող մասում է ասուում, այս գործը գրուել է վաւերագրերի եւ սկզբնաղբիւրների համակողմանի քննութեամբ եւ ընդգրկմամբ, երբ նա եղել է քաղաքի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդը, որի մասին Գովրիկեանը նշում է գրքի առաջաբանում՝ ասելով, թէ սկզբնապէս ծրագրել էր քաղաքի պատմութեանը վերաբերող տարբեր վաւերագրերը թեմատիկ խմբաւորմամբ հրատարակել որպէս առանձին յօդուածներ «Հան-

7 Հ. Վարդան վրդ. Ըստկարեան, Եկեղեցական պատմութիւն հանդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ, Վիեննա, 1872, էջ 384:

8 Նոյն տեղում:

9 Նոյն տեղում, էջ 386:

դէս ամսօրեայ»-ում: Սակայն երբ լոյս է տեսնում նման մի քանի յօդուած, իրեն են դիմում այդ շարքն առանձին մի գրքով տպագրելու խնդրանքով: Համեստօրէն ասում է, որ այս գրքի յօդուածաշարային բնոյթն արտացոլուել է այն իբրեւ գիրք տպագրելիս: Նման աշխատանքը կարեւորում է որպէս պատմական սկզբնաղբիւրների հրատարակութիւն, ընդ որում՝ ոչ միայն պատմութեան, այլեւ լեզուի ու բարբառագիտութեան, որովհետեւ, ինչպէս ինքն է նշում, այդ արձանագրութիւններում կենդանիօրէն արտացոլուել է նաեւ տեղի հայութեան ժողովրդախօսակցական լեզուն:

Մխիթարեան վարդապետն այս գործում պատմութեան անյոյզ շարադրողը է: Պատմութիւնը նրան մղում է շարունակական խորհրդածութիւնների, իր պարած ժամանակի հետ տարուող զուգահեռների: Նրա գրած պատմութեան էջերում միշտ երեւում է ներկան եւ ապագայի հարցադրումը: Սա մի պատմութիւն է՝ գրուած Տրանսիլուանիայի հայութեան՝ իր ժամանակի եւ ապագայի հանդէպ մտահոգութեամբ:

Անցեալի պատմութիւնը գրելիս այն շարունակ ներկայի հետ յարաբերելու մասին Առաջաբանում ասում է, որ այս գիրքը գրել է մխիթարանքով եւ կսկիծով: Մխիթարանքով, որովհետեւ ունեցել է այն գիտակցումը, որ մոռացութիւնից եւ կորստից փրկում է ազգային պատմութեան կարեւոր մի շարք էջեր եւ հին յիշատակներ: Սակայն, գրել է նաեւ կսկիծով, որովհետեւ փրկուած այդ յիշատակների մէջ «իբրեւ թէ հայելույ մը մէջ կը տեսնեմ ակներեւ, թէ մեր պապերը՝ մեզմէ որչափ աւելի էին թէ՛ ազգութեամբ, թէ՛ գոհողութեամբ, թէ՛ օտարաց առջեւ ունեցած հեղինակութեամբ, թէ՛ գիտութեամբ, թէ՛ հարստութեամբ, թէ՛ հաւատքով»¹⁰:

10 Հ. Գ. Գովրիկեան, Հայք Յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, էջ 2:

Այս գործում շարունակ շեշտում է երկու հանգամանք. առաջին՝ հայերի բերած մեծ նպաստն այս երկրամասի զարգացմանը եւ երկրորդ՝ տեղի իշխողների կողմից հայերին տրուած առանձնաշնորհումները սկսած Աբաֆի իշխանների հրովարտակներից:

Բաւականին խօսուն են քաղաքային ժողովի 1760 թ. արձանագրութեան հետեւեալ խօսքերը. «Քաղաքը միշտ պիտի մնայ հայու քաղաք ու հայու կառավարութեան ներքեւ»¹¹:

Աւելի քան 500 էջանոց այս գիրքը, ինչպէս ասացինք, հրատարակուած սկզբնաղբիւրներով արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում այս քաղաքում գործած արհեստակցական միութիւնների, տեղի վաճառականութեան եւ նրանց մինչեւ Վիեննա ունեցած առեւտրային յարաբերութիւնների եւ ընդհանրապէս հայ քաղաքային մշակոյթի մասին:

Նոյն կառուցուածքը եւ հարցադրումներն ունի Գովրիկեանի յաջորդ՝ «Դրանսիլուանիոյ հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլայ հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս» գործը, որը հրատարակուել է նախորդից երեք տարի անց: Ինչպէս վերնագրի ենթախորագրում է ասուում, այն ունի նաեւ մի շարք պատկերներ, որոնք թէ՛ Գեոլայի լուսանկարներն են եւ թէ՛ քաղաքում գործած հաստատութիւնների կնիքները եւ տարբեր դրոշմները:

Գեոլան յայտնի է Հայաքաղաք անուանմամբ: Գովրիկեանը, սակայն, ոչ միայն այս բնորոշումն է բերում, այլեւ գրքի հիմնական վերնագրում այն անուանում է Տրանսիլուանիայի հայոց Մետրոպոլիսը: Վերջին այս բնորոշման բացատրութեամբ է սկսում գրքի առաջաբանը, ուր նախ նշում է, որ երկրամասի հայկական համայնքներ ունեցող չորս գլխաւոր քաղաքներից Գեոլան «ամենէն մեծը, քաղա-

11 Նոյն տեղում, էջ 417:

քակիրթը, հարուստը, յառաջադէմն, ամենէն աւելի հայութեան ոգի ու բնակիչ» ունեցողն է¹²:

Յաւով նշում է, որ հունգարացիները հեզնանքով են այս քաղաքը Մետրապոլիս անուանել, որովհետեւ Գեռլան տուել է այնպիսի նշանաւոր դէմքեր, ովքեր պաշտպանել են ազգային իրաւունքները՝ «եկեղեցական անկախութիւնը, պաշտպանած ու ազգը կլլել եւ իրենց մէջն ամփոփել ուզողներուն դէմ մաքառած են, գործով, բանիւ եւ գրով»¹³:

Նախորդ գրքում աշխատանքի այժմէական հնչեղութիւնը եթէ արտայայտւում էր պատմական շարադրանքի ենթատեքստում, ապա այստեղ այն աւելի ցայտուն է դրսեւորւում եւ այդ մասին Գովրիկեանը գրում է. «Պատմութիւն չէ, նկարագիր մըն է առաջիկայ մատեանս, անանկ քաղաքի մը, որուն բնակիչները, ատեն մը բաղառաբար՝ իսկ հիմա իր մեծ մասովն ազգային են. քաղաք մը՝ որ յատկացեալ է Հայոց, որ Հայոցմէ հիմնուած է, որուն յատկազօր յօրինած է ազգային ճարտարապետ մը (Ալեքսանեան), որուն հիմնաքարը դրած է Հայ եպիսկոպոս մը (Վրզարեան) ասկէ իբր երկու հարիւր տարի յառաջ, 1700-ին»¹⁴:

Գրքի թեմատիկ ընդգրկման մասին գրում է. «Ստորագրութիւն մըն է մատեանս, հին ու նոր հայաքաղաքին արուեստաւորաց ու առեւտրական եղբայրութեանց եւ հոգեւոր ընկերութեանց, հրապարակական շէնքերուն, հիմնարկութեանց, իր մէջը գտնուած հրապարակական յիշատակներուն, եկեղեցական հանդերձից, ունեցած հին ձեռագիրներուն, դարձեալ ժողովրդական սովորութեանց, տեղական

12 Հ. Գրիգոր Գովրիկեան, Դրանսիոյ Ռայոնի Մետրապոլիսը, Վիեննա, 1886, էջ 12:
13 Նոյն տեղում, էջ 2:
14 Նոյն տեղում, էջ 2:

լեզուին, առասպելաց, ազգային առակաց ու երգոց բեկորներուն մնացորդներուն...»¹⁵:

Աւստրո-Հունգարական կայսրութեան տարածքում ապրող հայութեանը պատկերաւոր ձեւով անուանելով «բունէն» մեր կոճղէն անջատուած ազգայինքս», ասում է, որ ինչպէս իրենք են հետաքրքրութեամբ կարդում տարբեր երկրներում բնակուող մեր հայրենակիցների մասին, այնպէս էլ նրանք կը կարդան Տրանսիլուանիայի հայութեան մասին:

Այս գրքի գրութեան գլխաւոր նպատակը համարում է Գեռլայի պատմութիւնը մոռացութիւնից եւ ջնջուելուց փրկելը, իր իսկ բնորոշմամբ՝ «այն ատեն մը այնչափ ծաղկած ու հիմա այսպէս նուազելու եւ օրաւոր փճանալու վրայ եղած Հայ գաղթականութիւնը, գոնէ գրով ու տպագրութեամբ անմահանայ»:

Այս գործը նաեւ մի յիշատակ է համարում, որը ցոյց է տալիս, թէ Գեռլա Հայաքաղաքում (Armenopolis) ժամանակին միայն Հայեր են ապրել, ովքեր իրենց գործունէութեամբ հոգեւոր ու նիւթական մեծ աւանդ են թողել իրենց ժառանգներին:

Ինչքան որ Հպարտութեամբ է գրում Գեռլայի անցեալի մասին, այնքան էլ ցաւով է նշում, որ աստիճանական ուժացման ընթացքով մէկ դար յետոյ պէտք է անհետանայ նաեւ Տրանսիլուանիայի Հայոց այս մայրաքաղաքի միջից «հայութեան ոգին, Հայ լեզուն, սովորութիւնները», եթէ չվերականգնուի Հայ եպիսկոպոսութիւնը՝ եւ կամ էլ որեւէ մի արտաքին ազդակ վերջ չտայ ներքին ուժացման այս ընթացքին, ինչպէս օրինակ՝ մի որեւէ տեղից Հայկական մեծաթիւ գաղթականութեան հաստատումը եւ բնակեցումը Տրանսիլուանիայում:

Շատ է ցանկանում, որ իր այս մռայլ կանխագուշակումը չիրականանայ: Այս

15 Նոյն տեղում:

գրքի գրութեան նպատակներից է համարում եւ այն, որ այստեղի հայ գաղթականութեան վրայից «մոռացութեան քօղը վերցնել եւ զանիկա ընդհանուր ազգին, գոնէ ըստ մասին ծանօթացնել»¹⁶:

Նախ՝ նկարագրում է Հայաքաղաքի հիմնադրման պատմութիւնը, այստեղ գործած արհեստագործական կազմակերպութիւնները եւ նրանց կանոնադրութիւնները, վաճառականական միութիւնները եւ վաճառականների նշանաւոր ընկերութիւնները:

Գովրիկեանը առանձին մի բաժին է նուիրում Տրանսիլուանիայի Հայ եպիսկոպոսութեանը՝ նշելով, որ Օգսենտիոս Վրզարեանը թուրքերու է «անոր համար, որ իւր ազգը շատ սիրած եւ շրջակայից ազգայնութեանց հետ հաւասար իրականաց ու վիճակի բարձրացնել ուզած է»¹⁷:

Յաւով ասում է, որ Վրզարեանն ըստ էութեան եղաւ Տրանսիլուանիայի Հայ կաթողիկէ համայնքի առաջին եւ վերջին եպիսկոպոսը, քանի որ նրանից յետոյ Ստեփանոս Ռօշքային Հայերը չկարողացան առաջնորդ ընտրել իրենց անմիաբանութեան պատճառով եւ առժամանակ եկեղեցական իշխանութիւնը յանձնուեց տեղի լատին եպիսկոպոսին, ապա երբ Հայերը փորձեցին վերստին Հայ եպիսկոպոս ընտրել, արդէն ուշ էր: Գովրիկեանի իսկ բնորոշմամբ՝ «Ասանկով՝ կախ մնացած Հայ եպիսկոպոսութեան վերականգնումը չգործադրուեցաւ երբեք»¹⁸:

Ներկայացնելով Հայ եպիսկոպոսութեան համար մղուած պայքարը, շեշտում է, որ այն միայն անցեալի պատմութեանը չի վերաբերում, այլեւ այս գործի գրութեան ժամանակին, երբ Գեռլայի ազգային-եկեղեցական առաջնորդներից խաչիկ Լու-

16 Նոյն տեղում, էջ 10:
17 Նոյն տեղում, էջ 96:
18 Նոյն տեղում, էջ 98:

կաջեանը ամէն ինչ արեց, որ վերականգնուի եպիսկոպոսական աթոռը:

Վախճանուելուց նա անգամ մեծագուճար նուիրատուութիւն կատարեց յանուն վերականգնուելիք աթոռի, սակայն սպասուած այդ պահը դեռեւս չէր եկել: Այս մասին գրում է. «Դարուս երկրորդ կիսուն՝ նորէն ելաւ Լուքաջեան մը, որ Հայ եպիսկոպոսութիւնը Դրանսիլուանիոյ մէջ վերականգնէ: Անձնուրաց ու մեծախորհանձն ամէն միջոց բանեցուց, ամէն քար շարժեց, Հոռոմ գնաց, խօսեցաւ, գրեց, գործեց: Իւր մեծագուճար ստացուածքն՝ ըլլալու Հայ եպիսկոպոսութեան թողուց, եթէ որ իր մահուանէն հաշուելով՝ տասը տարուան միջոցի մէջ Հայ եպիսկոպոսութիւնն եւ կամ գոնէ Հայ տեղապահութիւն (vicariat) մը հաստատուի Դրանսիլուանիոյ մէջ, բայց իւր բոլոր ջանքը պարապի ելաւ, ամէն կողմանէ ընդդիմութեանց հանդիպեցաւ: Այսպէսով Հայ եպիսկոպոսութեան խնդիրն դարձեալ առկախեալ վիճակի մէջ թաղուեցաւ եւ Հայ եկեղեցին մնաց որբ ու լքեալ, եւ զուրկ ամէն օգնութենէ»¹⁹:

Յաջորդ բաժնում թուարկւում են Հայաքաղաքի եկեղեցիները՝ իրենց պատմութեամբ, ճարտարապետական յօրինուածքով ու վիճակական արձանագրութիւններով:

Գեռլայի նշանաւոր Հայերին նուիրուած բաժինը եւս սկսւում է Վրզարեանով՝ որպէս քաղաքի հիմնադիրով, իսկ այս հայերի շարքում դարձեալ առանձնացնում է խաչիկ Լուքաջեանին՝ նրա գործունէութիւնում վերստին ընդգծելով յատկապէս նրա թափած ջանքերը տեղի Հայ եպիսկոպոսութեան վերականգնման գործում: «Իր եռանդուն գործունէութիւնը կոտրեց մահը... Եւ ոչ իսկ նաքաւ լեռը կրցաւ ելլել, որ գոնէ անկէ կարենայ նշարել խոստացուած երկիրը... Ասանկ իրեն հետ գերեզման գնաց Հունգարահայոց եպիսկոպոսութեան վերսու-

19 Նոյն տեղում, էջ 99:

կանգնուելուն վերջին յոյսն ալ»²⁰: Լուքա-
չեանի մահուան մասին խօսքերին յաջոր-
դող բազմակէտը, թերեւս, ակնարկում է, որ
նա եւս, միգուցէ, Վրզարեանի նման իր
բնական մահով չի մահացել:

Գովրիկեանը կազմել է նաեւ Հայաքա-
ղաքի պատմական ժամանակագրութիւնը,
որը սկսուում է 1672 թուականով:

Գրքի երկրորդ մասը վերնագրուած է
«Հայաքաղաքին ներկան», եւ Հանգամա-
նալից նկարագրուած է քաղաքային իշխա-
նութիւնների գործունէութիւնը, բերուած
է քաղաքի յատկազօծը եւ նշուած են Հա-
յերին պատկանող շինութիւնները, փողոց-
ները եւ քաղաքի Հայկական անուանում-
ները:

Ծաւալուն մի բաժին են գրաւում քա-
ղաքի Հայկական շինութիւններին վերաբե-
րող վիմական արձանագրութիւնները, ո-
րոնք բերուած են «Հրապարակական յիշա-
տակարաններ» խորագրի ներքոյ:

Թէ որքան ուժեղ է եղել ազգային
ինքնագիտակցութիւնը Տրանսիլուանիայի
Հայութեան մէջ նաեւ ժ.թ. դարավերջին, ե-
րեւում է Գովրիկեանի վկայակոչած մի
փաստաթղթից, որը գրուել է 1889 թ.: Այս
գրութիւնում Տրանսիլուանիայի Հայերը ի-
րենց բնորոշում են հետեւեալ ձևով.
«Մենք Աւստրո-Հունգարական պետու-
թեան Հայաշուրթն քաղաքացիները»²¹:

Ազգային ինքնութիւնը պահելով՝
տուեալ երկրի քաղաքացիները լինելուն
վերաբերող բնորոշ մի օրինակ է այս փաս-
տաթղթում տեղ գտած հետեւեալ ձևակեր-
պումը, ուր նշուում է, որ իրենց Հայ մշա-
կութային ժառանգութիւնը կրելը եւ այն
Հունգարիային ներկայացնելը Հարստաց-
նում է նաեւ ընդհանուր Հունգարական
մշակոյթը. «Մենք, որ մեր ազգային մատե-
նագրութեան գրքերը՝ Հունգարերէն լեզուի

20 Նոյն տեղում, էջ 145:
21 Նոյն տեղում, էջ 216:

կը փոխենք, մենք, որ մեր պատմական ժա-
մանակաց մինչեւ ամենէն Հին ատեններն՝
Հասնող քաղաքակրթութեան գանձերովը՝
Հունգարական Համակրթութեան մթերանո-
ցը Հարստացնելու կը ճգնինք, կը զգանք՝
գիտենք, որ ասով ալ Հունգարական տէ-
րութեան ծառայութիւն մը կը մատուցա-
նենք»²²:

Եկեղեցիների մասին գրում է նաեւ
այս երկրորդ բաժնում՝ արդէն նշելով, թէ
այդ պահին որքան սպասաւորներ կան եւ ե-
կեղեցական ինչ սպասք ունեն, եւ այս բա-
ժինը անգնահատելի կարեւորութիւն ունի
թէ՛ Տրանսիլուանիայի եւ թէ՛ ընդհանրապէս
Հունգարահայոց մշակութային ժառանգու-
թեան պատմութեան տեսանկիւնից:

Առանձին մի բաժին է նուիրուած
Գեռլայում Հունգարերէնով Հրատարա-
կուած «Արմենիա» ամսաթերթին եւ նրա
խաղացած դերին տեղի Հայութեան ազգա-
յին ինքնութեան պահպանման գործում:
Գովրիկեանը ամսագիրը բնորոշում է այս-
պէս՝ «Հունգարալեզու, բայց բովանդակու-
թեամբ զուտ Հայ ամսաթերթը»²³:

Ժ.թ. դարի վերջերից ձեւաւորուած ա-
ւանդոյթով որեւէ բնակավայրի կամ Հա-
մայնքի պատմութեանը նուիրուած գործե-
րում տեղ էր յատկացւում նաեւ կենցաղա-
յին եւ ազգագրական սովորոյթներին. այս-
տեղ եւս պատշաճ տեղ է յատկացւում ազ-
գային տարբեր սովորոյթներին ու եկեղե-
ցական տօների կատարմանը, որոնք ներկա-
յացւում են «Այլեւայլ տեղական սովորու-
թիւններ» խորագրի ներքոյ: Աւելին՝ ինչ-
պէս գրում է Գովրիկեանը. «Որպէսզի ըն-
թերցողը գաղափար մ'ունենայ, Կերլա Հա-
յաքաղաքին մէջ բնակող ազգայնոց արտա-
քին որպիսութեանն ու տարազին վրայ, կը
ներկայացնենք Հոս՝ այլեւայլ աստիճանի է-
րիկ մարդիկներու, ինչպէս նաեւ կանանց

22 Նոյն տեղում, էջ 218:
23 Նոյն տեղում, էջ 234:

սեռին մէջէն զանազան վիճակ ունեցող ան-
ձինքներու պատկերները»²⁴: Բերուած լու-
սանկարները մեծապէս կարեւորում են
գաղթաշխարհի Հայ քաղաքային մշակոյթի
ուսումնասիրման տեսանկիւնից:

Իսկ ընտանեկան սովորոյթների եւ
տարբեր տօների նկարագրութիւնն էլ վկա-
յում է, որ ժ.թ. դարի վերջին տեղի Հայու-
թիւնը մեծապէս փարուած է եղել իր ազգա-
յին-եկեղեցական աւանդոյթներին: Գովրի-
կեանը բերում է նաեւ այդ արարողութիւն-
ների ժամանակ երգուող ստեղծագործու-
թիւնները, որոնք պատկերացում են տալիս
Հունգարահայերի խօսուածքի մասին:

«Ազգային ասացուածներ, առածներ»
խորագրի ներքոյ բերուած են տեղի ժո-
ղովրդական բանահիւսութեան տարբեր
ժանրերի մի շարք նմուշներ: Գովրիկեանը,
կարեւորելով ժողովրդական ստեղծագոր-
ծութիւնների դերը ժողովրդի հոգեբանու-
թեան ու նկարագրի իւրայատկութիւնները
վեր հանելու գործում, այնուհետեւ գրում
է. «Մեր փորձառու պապերուն այս առա-
քինութեանց արձանագրութիւններէն մէկ
քանին կը ներկայացնենք ընթերցողաց:
Թէպէտ ասոնք ընդհանուր ազգին են,
բայց ասոնց շատերը՝ միայն Դրանսիլուա-
նիոյ Հայոց մէջ կը լսենք, միայն իրենք կը
գործածեն»²⁵:

Անհրաժեշտ է նշել, որ հետաքրքիր
են նաեւ այն առածներն ու ասացուածքնե-
րը, որոնք մի նոր ձեւ են ստացել Հունգա-
րահայ միջավայրում: Այսպէս՝ «Ջրի մէջ
ընկնողը թրջուելուց չի վախենայ» ասա-
ցուածքն այստեղ ասուում է հետեւեալ ձե-
ւով. «Ջրի մէջ ընկնողը չի վախնայ թա-
թուէ», «Ձուկը ջրում սակարկում են»
«Ջրին մէջ ձուկը չունի արժէք», «Խելքով
«Ջրնամին անխելք բարեկամից լաւ է» «Ալ
աղէկն է խելգով թշնամին, քան անխելք

24 Նոյն տեղում, էջ 239:
25 Նոյն տեղում, էջ 288:

բարեկամը», «Մէկ ձեռքով երկու ձմերուկ
չես կարող բռնել»՝ «Մէկ ձեռաց մէջ չիս
կարնայ էրկու սեխ բռնելու», «Կատուի
խաղ՝ մկան մահ»՝ «Կատուին խաղի է, մը-
կանը մահու է», «Մի խելքը լաւ է, երկու-
սը՝ աւելի լաւ»՝ «Մէկ խելքը աղէկն է, եր-
կուսը դեռ ալ աղէկն է», «էջն ինչ գիտի
նուշն ինչ է»՝ «Ինչ գիտի մըկարը [էջը],
թէ ինչ է չամիջը», «Աչքից հեռու՝ սրտից
հեռու»՝ «Վով հերու է աչքէն, հերոյ է
սիրտէն», «Ջուրը չտեսած չեն բոբիկա-
նայ»՝ «Ինչուր ի չի տեսնուս ըզըրը, մի
Հանի զբաբուկը [կօշիկը]»:

Գեռլա Հայաքաղաքը իւրօրինակ ձե-
ւով մի փոքր Հայաստան է ընկալուել եւ
այնտեղից հեռանալը Հայրենիքից երկրորդ
անգամ հեռանալ է Համարուել:

Գեռլային նուիրուած մի ժողովրդա-
կան երգում այս ըմբռնման հարազատ ար-
տայայտութիւնն են հետեւեալ երկու տո-
ղերը.

Հայոց քաղաք դում մեծ Կերլա,
Արամ իճծի հիմաի մընայ.
Չէ ես մօտէդ հերու կ'երթամ,
Հայոց ազգէ կու հերեմաս:

Ասոր համար բարով կեցիո.
Իճծիմով ալ ալ քիչ եղիր,
Կերթամ մօտէդ օտար երկիր,
Մ'ազար [թեպետ ել] թէ դում գիս հոս արիր²⁶:

Գովրիկեանը բերում է նաեւ մի քանի
հեքիաթների գրառումներ՝ «Առասպելներ»
անուանմամբ:

Գովրիկեանը 1903-1904 թթ. վերստին
անդրադառնում է Եղիսաբեթուպոլսի Հա-
յոց պատմութեանը նոր շրջանին: Առան-
ձին մի յօդուածաշարով՝ «Եղիսաբեթուպո-
լիս քաղաքն ու ազգայինք»²⁷, ներկայաց-
նում է, թէ Հայերը ինչպէս վնասուեցին

26 Նոյն տեղում, էջ 307:
27 Տե՛ս ՀԱ, Վիեննա, 1903, էջ 54-58, 161-163, 246-
249, 295-297:

1848-1849 թթ. Հունդարական ապստամբութեան ժամանակ թէ՛ ապստամբութեան առաջ բերած խռովութեան եւ թէ՛ կառավարական ուժերի ձեռնարկած պատասխան քայլերի արդիւնքում:

Յաջորդ յօդուածը, որը բաղկացած է երկու մասից, նուիրուած է Եղիսաբեթուպոլսում ամբողջապէս Հայածէս ժողովրդապետութեան Հաստատմանը, որը Գովրիկեանը կարեւոր մի քայլ է Համարում ազգային նկարագրի պահպանման գործում: Այստեղ վերստին արծարծուում է Հայկական եպիսկոպոսական իշխանութեան վերականգնման Հարցը պատմական վաւերագրերի վկայակոչմամբ:

Որպէս այս շարքի ամփոփում Հարց է տալիս, թէ տեղի Հայութիւնը ինչու է «Հիմակ այն աստիճանի նուազած, ազգային ոգին կորսուեցուցած, ինկած ու փճացած»²⁸: Գոյներն առաւել խտացնելով՝ ասում է, որ եթէ քաղաքի ներկան Համեմատենք անցեալի հետ՝ «այսօրուան ազգայինները հազիւ կրնանք ճանչնալ: Կարծես թէ ան ազգը չէ, ան ժողովուրդը չէ»:

Նման անկումը բացատրում է արտաքին եւ ներքին պատճառներով: Արտաքինը այն է, որ Եղիսաբեթուպոլիսը վաճառականութեան բնագաւառում մրցակցութեան մէջ պարտուեց շրջակայ Հունգարական քաղաքներին: Իսկ ազգային ներքին պատճառներից գլխաւորը դարձեալ Համարում է ազգային-եկեղեցական կառոյց չունենալը, որով Ս. Պատարագը ու եկեղեցական միւս արարողութիւնները լատինածէս սկսեցին կատարուել, որով Հայոց լեզուն աստիճանաբար դուրս մղուեց նաեւ եկեղեցուց, որն էլ իր Հերթին աղետալի ձեւով անդրադարձաւ ազգային նկարագրի պահպանման վրայ:

Գովրիկեանը գալիս է այն տխուր եզրակացութեան, որ տեղի Հայութիւնը ազգային առումով գրեթէ անկենսունակ է

28 ՀԱ, 1904, էջ 320:

դարձել, ուստի եւ նմանեցնում է մարդու, որը «Միտք ունի, բայց չի կրնար շիտակ խորհիլ, լեզու ունի, բայց չի կրնար խօսիլ, ձեռք ու ոտք ունի, բայց չի կրնար շարժիլ: Բոլորովին անկարող եղած է ...»²⁹:

Որպէս ամփոփում ասում է, թէ խորենացու գրիչն է Հարկաւոր քաղաքի վիճակը ողբալու Համար:

Գովրիկեանը թարգմանաբար ներկայացնում է նաեւ Հունգարերէն գրուած մի յօդուած Հայոց պատարագի մասին եւ իր ներածական խօսքում ընդգծում Տրանսիլուանիայում Հայկական ծէսով պատարագի մատուցման կարեւորութիւնը:

Պատմական վաւերագրերի միջոցով Տրանսիլուանիայի Հայութեան անցեալի տարբեր կողմերը ներկայացնելու իր սկզբունքին Հաւատարիմ «Դրանսիլուանիայի ազգային ազնուագարմ գերդաստաններուն անունները» յօդուածում թուարկում է նման գերդաստանները՝ խօսքը կենտրոնացնելով Գարաջոնեանց գերդաստանի պատմութեան վրայ: Յօդուածին կից տպագրուած է նաեւ այս տոհմի զինանշանը եւ Գուրդիոն Գարաջոնեանի նկարը³⁰:

«Հանդէս ամսօրեայ»-ն տպագրում էր Հայագիտութեանը եւ Հայ ժողովրդին վերաբերող գործերի տեսութիւնը եւ գերմաներէն Համառօտ վերաշարադրանքը, ինչպէս նաեւ Աւստրո-Հունգարական կայսրութիւնում լոյս տեսնող պարբերականներում տեղ գտած յօդուածների վերաշարադրանքը: 1899 թ. դեկտեմբերի Համարի վերջում, լուրերի բաժնում մի ծանուցում է տպագրուում, ուր ասում է, թէ Վիեննայում գերմաներէնով լոյս տեսնող «Vaterland» լրագրի 1899 թ. նոյեմբերի 22-ի Համարում այս լրագիրը գովեստի խօսքեր է գրել Գեռլայի մասին: Վիեննայում հրատարակուող լրագիրը այս յօդուածը գրել է

29 Նոյն տեղում, էջ 323:
30 ՀԱ, 1905, էջ 257-265:

քաղաքի Հիմնադրման 200-ամեակի առիթով: Ամսագրում թարգմանաբար ներկայացնում են Հայաքաղաքին վերաբերող Հետեւեալ գրուատալից խօսքերը. «Գալտարի այս սիրուն, գործունեայ ճարտարարուեստ քաղաքը՝ իւր գոյութեան 200-ամեակը պիտի կատարէ»³¹:

«Հանդէս ամսօրեայ»-ում առանձնակի մի ոգեւորութեամբ է գրուած Օգսենտիոս Վրզարեանի արձանը Գեռլայում տեղադրելու մասին, քանի որ այս եպիսկոպոսի անուան հետ է կապուում Տրանսիլուանիայում Հայկական առանձին եպիսկոպոսութեան Հիմնումը կաթողիկէ եկեղեցու շրջագծում:

Ամսագրի 1900 թ. յունուարեան Համարը բացւում է այս մասին ծանուցմամբ: Ասում է, թէ այն տպաւորութիւնն էր իշխում, որ Գեռլայի Հայութեան մէջ շատ է թուլացել ազգային զգացումը, սակայն նման արձան կանգնեցնելու մտադրութիւնը հակառակն է վկայում. «Այստեղի գաղթականաց Համար, ընդհանուր սովորութեամբ մը կ'ըսենք, թէ լեզունին, ազգայնութեան ճշմարիտ յիշատակը բնականապէս իր օրինաւոր սահմանին ու պարտուպատիւ չաճ չափուն մէջ մնալով, տեղ մը այնպէս պահուած մնացած չէ, տեղ մը այնպէս յարգուած չէ, ինչպէս ասոնց քով»³²:

Համանման ձեւով մեծ ոգեւորութեամբ է ընդունւում Գեռլայում Հայկական թանգարան Հիմնելու լուրը, քանի որ ազգային յիշատակների Հաւաքումը եւ մէկտեղումը, բնականաբար, յանգեցնելու էր ազգային անցեալի իմաստաւորմանը եւ Հայկական ինքնութեան գիտակցման զօրացմանը:

31 ՀԱ, 1899, էջ 382:
32 ՀԱ, 1900, էջ 1

Ամսագիրը մի քանի յօդուած է նուիրել Հիմնուելիք թանգարանին: «Հայկական թանգարան ի Հայաքաղաքն Կերլա» յօդուածում ծանուցում է թանգարան Հիմնելու մտադրութեան մասին եւ ասում է, որ սկսուել է նմուշների Հաւաքումը: Այս թանգարանի նպատակը միայն անցեալի աւարկաների Հաւաքումը չէր, այլեւ ազգային ինքնագիտակցութեանը զարկ տալը, երեւում է թանգարանի կանոնադրութեան երրորդ յօդուածից, որում ասում է, թէ թանգարանի նպատակներից է «Հայ աւանդութեան եւ ազգային ժողովրդական զգացումը տածել»³³:

Յօդուածում այնուհետեւ ասում է, թէ Հունգարական մամուլն այս ձեռնարկման մէջ անջատողականութիւն է տեսնում եւ բացասաբար է վերաբերում: Յօդուածաւ գիրը, սակայն, ով դարձեալ Գովրիկեանն է, ոչ մի Հիմք չի տեսնում նման մտահոգութեան Համար:

1906 թ., լոյս տեսած մի Հրապարակման մէջ ասում է, որ պեղումներ են կատարուում քաղաքի Հին Հռոմէական ամրոտարուում քաղաքի Հին Հռոմէական ամրոցում, որտեղից ելած գտածոների մի մասը բերուել է Հայկական թանգարան³⁴: Մէկ այլ Հրապարակումից էլ տեղեկանում ենք, այլ Հրապարակումից էլ տեղեկանում ենք, որ թանգարանի բացումը կատարուել է 1907 թ. օգոստոսի 9-ին³⁵: Թանգարանի պաշտօնական բացումը, սակայն, կատարուում է 1909 թ. սեպտեմբերի 19-ին: Կառոււում է 1909 թ. սեպտեմբերի 19-ին: Կառավարումը յանձնւում է քաղաքի Հայկական եկեղեցական վարչութեանը³⁶:

Գեռլայի Հայկական թանգարանի ցուցանմուշները եւ նիւթերն այժմ պահպանւում եւ ցուցադրուում են Գեռլայի քաղաքային թանգարանում³⁷:

33 ՀԱ, 1905, էջ 65:
34 ՀԱ, 1906, էջ 8:
35 ՀԱ, 1907, էջ 317:
36 ՀԱ, 1909, էջ 348-349:
37 Գեռլայի հայկական մշակոյթը եւ արուեստը, Բոլխարեստ, 2002, էջ 44-45:

Հաւատացելոց Հոգեկան աշխարհի ամէն թելերը»⁴³:

Ազգութեամբ ու նկարագրով Հայ լինելու եւ կաթողիկէ դաւանանքին ու եկեղեցուն պատկանելու մասին գրում է. «Մեր ներքին համոզումն ան է, թէ Հաւատքի սահմանին մէջ ալ, մեր պարտաւորութիւնն է, կարելի եղածին չափ Հայ քահանայ ունենալ ու գործածել: Ուր որ աս բանս չենք կրնար ընել, այո կրնանք ուղղափառ լատինածէս եկեղեցւոյն օրէնքներուն համեմատ ապրիլ, բայց առանց ասով՝ մեր Հայ կաթողիկէ նկարագիրը կորսնցընելու»:

Ընդհանրապէս անհրաժեշտ է նշել, որ 1900-ական թուականներին Հունգարահայութիւնը առաւել եռանդուն ձեւով է պայքարել իր եկեղեցական իրաւունքների վերականգնման համար, իսկ «Հանդէս ամսօրեայ»-ի կողմից դա բնորոշուել է որպէս Տրանսիլուանիայի Հայութեան ազգային ցանկութիւնը: 1901 թ. հրատարակուած «Դրանսիլուանիոյ ազգայնոց փափաքը» յօդուածում ասուում է, որ տեղի Հայութիւնը 185 տարի է, որ պայքարում է այս նպատակով, ուստի այն միայն մէկ սերնդի ցանկութիւնը եւ կամքը չէ. «Հայերը չեն խնդրեր արտօնութիւն իրենց համար, եւ ոչ ալ արդարակորովութիւն, հապա միայն ետ կը խնդրեն զայն, ինչ որ արդէն ունէին»⁴⁴: Վերջին խօսքերով նկատի ունի Վրդարեանի օրօք հաստատուած եպիսկոպոսական աթոռը:

Հ. Գ. Գովրիկեանի՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ընդհանուր Աբբա՛սայր դառնալուց յետոյ Տրանսիլուանիայի Հայերն աւելի են ոգեւորուում, որ իրենց շահերի անխոնջ պաշտպանն, արդէն եկեղեցական աւելի բարձր պաշտօն ստանձնելով, առաւել բարձր կարգավիճակով յետամուտ կը լինի իրենց իրաւունք-

ներին: Եւ իրապէս, յաջորդ տարի Գովրիկեանի գլխաւորութեամբ Տրանսիլուանիայի եւ ընդհանրապէս Հունգարիայի Հայերը Գովրիկեան արբա՛սայր գլխաւորութեամբ պատկառելի մի պատուիրակութեամբ 1910 թ. Բուդապեշտում հանդիպում են «Կրօնի եւ համակրթութեան Հունգարական նախարարին»: Վերջինս, սակայն, ո՛չ ընդառաջում է նրանց խնդրանքը եւ ո՛չ էլ մերժում, այլ խուսափողական պատասխան է տալիս⁴⁵:

«Հանդէս ամսօրեայ»-ի այդ տարուայ մէկ այլ հրապարակման մէջ Հ. Ա. Զնդոյեանն անդրադառնում է այն Հարցին, թէ Տրանսիլուանիայի Հայերը ինչու են այդպէս յամառօրէն յետամուտ լինում Հայկական եպիսկոպոսական աթոռի վերականգնմանը եւ այդ նախանձախնդրութիւնը բացատրում է այն հանգամանքով, որ տեղի Հայութիւնը արդէն սպառել է իր ազգային ինքնութիւնը Հայապահպանութեան միւս միջոցներով (մայրենի լեզու եւ Հայկական կրթութիւն) իրականացնելու հնարաւորութիւնը, եւ վերջին յոյսը մնացել է ինքնորոշ եկեղեցական կառոյց ունենալը: Այս մասին Զնդոյեանը գրում է. «Ձարմանալի չէ, երբ Հայ եպիսկոպոսի նկատմամբ հունգարահայը կը կարծէ, թէ պիտի ըլլայ իրեն համար Մովսէս մը, որ Հասցնելով նոր կղերականներ ցիր ու ցան հօտին գլուխներ, արծարծելով Հայ ծէսը, Հայ ոգին ու Հայ լեզուն, տայ Հայութեան այն սպեղանին, որով յուսալի է երկարել Հայուն կեանքը»⁴⁶:

Տրանսիլուանիայի Հայերի՝ Հունգարիայի կրթութեան նախարարին հանդիպելու մասին «Արարատ» ամսագիրը գրում է. «Հունգարիոյ կաթողիկէ Հայերը պատուիրակութիւն մը զրկեր են կրթական նախարարին, խնդրելով, որ Հունգարիոյ մէջ եպիսկոպոսական աթոռ մը հաստատուի: Կրթա-

43 Նոյն տեղում, էջ 197:
44 ՀԱ, 1901, էջ 358:

45 ՀԱ, 1910, էջ 353:
46 Նոյն տեղում, էջ 248:

կան նախարարն ընդունելով այս պատուիրակութիւնը, թէեւ այս խնդրանքին հաւանութիւն յայտնեց է, բայց ըսեց է, թէ վերջնական որոշում մը տալը՝ Պապին հաւանութենէն կախում ունի»⁴⁷:

«Արարատը» արտատպել է նաեւ Հ. Ա. Զնդոյեանի՝ վերը յիշուած յօդուածը⁴⁸:

Յաջորդ տարի, վերստին անդրադառնալով այս Հարցին, Ամենայն Հայոց կաթողիկոսութեան պաշտօնական ամսագիրը գրում է. «Նրանք, որոնց մէջ ազգային զգացումը դեռ վառ է, ձգտում են ունենալ Հայ եպիսկոպոս, որպէսզի սա հսկէր ազգային սովորութիւնների, Հայ լեզուով ժամակարգութեան եւ Հայածէս արարողութիւնների անթերի կատարման վերայ, յուսալով, թէ այդպիսով վայրավատին Հայ կաթողիկէ այս հատուածի կորստեան առաջը կ'առնուի»⁴⁹:

«Հանդէս ամսօրեայ»-ում տպագրուած թէ՛ շնորհաւորական ուրախ եւ թէ՛ ցաւակցական մի շարք հեռագրեր Գեոլայից ու Եղիսաբեթուպոլսից վկայում են, որ Տրանսիլուանիայի եւ յատկապէս այս երկու քաղաքների Հայութիւնը արձագանքել են տարբեր իրադարձութիւններին՝ Հաւաստելով իրենց կապուածութիւնը Հայութեան հետ, ինչպէս նաեւ իւրօրինակ ձեւով որպէս իրենց հոգեւոր առաջնորդութիւն են ընդունել Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը:

Այսպէս՝ Մխիթարեան ընդհանուր Միաբանութեան 200-ամեակի առիթով Գեոլայի քաղաքային խորհրդի կողմից Վիեննայի Մխիթարեան միաբանութեանը շնորհաւորել է քաղաքապետ Լուսիկ Թէոֆորոսեանը՝ գրելով. «Շնորհէ ամենաբարին Աստուած, որ Մեծդ հաստատութիւնդ ընդանթիւ ամս զարգանայ, ծաղկի եւ ապագա-

յին մէջ ալ իւր ազնուական եւ բարձր կոչումն ընդհանուր գոհութեան վրայ հիմնէ»⁵⁰: Յատկանշական է, որ միաբանութեան հիմնադրման 200-ամեակի առիթով շնորհաւորական հեռագիրը ուղարկուած է Վիեննա եւ ոչ թէ Վենետիկ:

1902 թ. Գեոլայի Հայ ժողովրդապետը արդէն ցաւակցում է արբա՛սայր եւ ականաւոր Հայագէտ Հ. Արսէն Այտնեանի վախճանման առիթով⁵¹:

Ինչպէս արդէն նշեցինք, Տրանսիլուանիայի Հայութիւնը առանձնակի ոգեւորութեամբ ընդունեց Հ. Գ. Գովրիկեանի արբա՛սայր ընտրուելու լուրը: Համանման ձեւով Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնն է շեշտում նրա կապը Տրանսիլուանիայի հետ: Նորընտիր արբա՛սայր կենսագրութիւնը ներկայացնելով՝ «Հանդէս ամսօրեայ»-ն գրում է. «Հայկական թագաւորանիստ Հին Անույ է. «Հայկական թագաւորանիստ Հին Անույ գաղթականութեան ազնիւ սերունդէն է նորընտիր Աբբա՛սայրը եւ Հունգարական տէրութենէն ճանաչուած է իբր ազնուական զարմի շառաւիղ»⁵²:

Յաջորդ տարի արբա՛սայր եպիսկոպոսական օժման առիթով էլ ամսագրում յատուկ նշում է նրա գործունէութեան՝ Հունգարիային վերաբերող շրջանը. «Արտաքոյրիային վերաբերող շրջանը. «Արտաքոյրիային արդիւնաւէտ ու արգասաբեր եղաւ կարգի արդիւնաւէտ ու արգասաբեր եղաւ Գովրիկեանի կեանքը, զոր վարեց Հունգարիա նախ (1879-1890 թթ.) Կերլայի որբարիա նախ (1879-1890 թթ.) Կերլայի որբարիա նախ (1879-1890 թթ.) Կերլայի որբարիա նախ (1879-1890 թթ.) նոցի իբր տեսուչ, եւ ապա (1890-1909 թթ.) նոցի իբր տեսուչ»⁵³:

Այս գոյգ իրադարձութիւնների առիթով շնորհաւորական հեռագրեր են ստացւում Գեոլայից ու Եղիսաբեթուպոլսից⁵⁴:

50 ՀԱ, 1901, էջ 275:
51 ՀԱ, 1902, էջ 274:
52 ՀԱ, 1909, էջ 225:
53 ՀԱ, 1910, էջ 226:
54 Նոյն տեղում, էջ 197-198:

47 «Արարատ», 1910, էջ 1055:
48 Նոյն տեղում, էջ 932-933:
49 «Արարատ», 1911, էջ 108:

1911 թ. արդէն լրանում է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան հիմնման 100-ամեակը, եւ այդ առիթով գոյգ հեռագրեր են ստացուում Գեռլայից, մէկը՝ քաղաքային իշխանութեան կողմից եւ միւսը՝ տեղի հայկական որբանոցի վարչութեան կողմից⁵⁵:

Գեռլայից ստացուած եւ «Հանդէս ամսօրեայ»-ում տեղ գտած յաջորդ երկու հեռագրերը վերաբերում են Գոլրիկեան արբահօր ծննդեան 60-ամեակին եւ ապա վախճանմանը: Աբբահօր 60-ամեակի առիթով Գեռլայի հոգեւոր հովուի շնորհաւորական հեռագրում ասուում է. «Ուրախալի յոբելեանիդ առթիւ կ'աղօթեմ, որ բարերար Աստուծոյ սէրը ոսկեգօծէ գերապայծառութեանդ ապագայ կեանքը»⁵⁶:

1931 թ. Աբբահօր վախճանման առիթով էլ Գեռլայի հոգեւոր հովիւ Տ. Բարդուղիմէոս Շահինը գրում է. «Այս լուրը տիրեցուց ոչ միայն ամբողջ Հայաքաղաքիս հայութիւնը, այլեւ մասնաւորաբար զիս, Ռրուն վերջին ձեռնադրեալն ըլլալու ուրախութիւնն եւ պատիւն ունեցած էի»⁵⁷:

Այս հեռագրից, փաստօրէն, նաեւ իմանում ենք, որ Հայաքաղաքի վերջին

55 ՀԱ., 1911, էջ 641, 644:
56 ՀԱ., 1921, էջ 268:
57 ՀԱ., 1931, էջ 17:

ձեռնադրուած հայ հոգեւորականը, ով ձեռնադրուել է հէնց Գոլրիկեանի կողմից, եղել է Տ. Բարդուղիմէոս Շահինը:

Գեռլայի հայ կաթողիկէ համայնքը 1937 թ. շնորհաւորում է նաեւ «Հանդէս ամսօրեայ»-ի հրատարակութեան յիսունամեակը:

Շարունակելով նախորդ շրջանի աւանդոյթը, 1971 թ. Գեռլայի հայութիւնը շնորհաւորական հեռագիր է ուղարկում Հ. Գրիգորիս Մանեանին Մխիթարեան միաբանութեան ընդհանուր արբահայր ընտրուելու առիթով: Այս հեռագիրն արդէն համայնքային բնոյթ ունէր, քանի որ ստորագրուած էր այսպէս՝ «Գեռլա Հայաքաղաքի հայ հասարակութեան կողմից»⁵⁸:

Տրանսիլուանիայի հայութեան հետ Մխիթարեան միաբանութեան շուրջ 300-ամեայ հոգեւոր-մշակութային այս հաղորդութիւնը հոգեւոր բարոյական պարտք է դնում Միաբանութեան վրայ այսուհետեւ եւս չանտեսել տեղի հայ կաթողիկէ համայնքը, ինչպէս նաեւ՝ հրատարակել Միաբանութեան դիւանները՝ Տրանսիլուանիային վերաբերող մեծաթիւ պատմաաղբիւրագիտական բնոյթի վաւերագրերը:

58 ՀԱ., 1971, էջ 273:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՆ ՈՒ ԼԵՀԱՀԱՅՔ

Փիրուզա Սաւցակաւեան

Լեհահայ համայնքի¹ եւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան յարաբերութիւնների մասին հնարաւոր չէ լիարժէք պատկերացում կազմել, եթէ այս յարաբերութիւնները չդիտարկենք Լեհաստան-Աւստրիական կայսրութիւն յարաբերութիւնների համատեքստում, այն պարզ պատճառով, որ Լեհահայ համայնքը, գործելով Լեհաստանի կազմում, չէր կարող անմասն մնալ Լեհաստանում տեղի ունեցող զարգացումներից, ինչպէս նաեւ Վիեննայում հաստատուած եւ աւստրիական կայսրութեան քաղաքականութեան կրողն՝ ու արտայայտողը Հանդիսացող միաբանութեան այս ճիւղը՝ Աւստրիայում տեղի ունեցող իրադարձութիւններից: 1772 թ. Լեհական թագաւորութիւնը բաժանուեց Ռուսական կայսրութեան, Պրուսիայի եւ Աւստրիայի միջեւ: Զաւթիչների նոյն կազմը պահպանուեց նաեւ Լեհաստանի պատմութեան երրորդ բաժանման ժամանակ՝ 1795 թ.²: Լեհաստանի՝ Լեհահայերով բնակեցուած հարաւարեւելեան տարածքները, որոնք ընդգրկուեցին Գալիցիայի եւ Լոդոմերիայի թագաւորութեան կազմում, ինչպէս առաջին, այնպէս էլ եր-

րորդ բաժանման ժամանակ անցան Աւստրիային: Մխիթարեան միաբանութեան վիեննական ճիւղը, լինելով աւստրիահայապատկերական ճիւղը, իր լայն իրաւունքներ ստացաւ այդ կայսրութեան մի մասը կազմող Լեհական հողերում բնակուող հայ համայնքի նկատմամբ:

Սկսած ԺԸ դարի վերջերից Լեհահայոց համայնքի եւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան միջեւ եղած կապերի մասին են փաստում Վենետիկի Մխիթարեան հաստանից բերուած որոշ ձեռագրերի հաստանից նկարագրութիւնները, ինչ-ձեռքբերման նկարագրութիւնները, ինչպէս նաեւ՝ վենետիկեան մխիթարեանների պէս նաեւ՝ վենետիկեան միաբանների պայցելութիւնները Լեհահայոց համայնքի³:

Վիեննայի Մխիթարեան միաբանութեան եւ Լեհահայոց յարաբերութիւնները դիտարկենք հետեւեալ հարթութիւններում՝

1. Լեհահայ համայնք եւ աւստրիական տեղական իշխանութիւններ,
2. Մխիթարեան միաբանների՝ Լեհահայ համայնքի պատմութեանը վերաբերող ինքնուրոյն գործեր կամ թարգմանութիւններ,
3. Լեհահայ մխիթարեաններ:

2009 թուականից Հանդիսանալով կրակովի Եազելոնեան համալսարանի սուպիրանտ՝ զբաղւում եմ Լեհահայ պատմական համայնքի լեզուական առանձնայատկութիւնների⁴ ուսումնասիրութեամբ: Աշ-

1 F. Zajaczkowski, Wiadomość o Ormianach w Poszcze, Lwów, 1842/K. Stopka, Ormianie w Polsce dawnej i dzisiejszej, Kraków 2000.
2 Երկրորդ բաժանումը տեղի ունեցաւ 1793 թ. Երկրորդ թագաւորութեան եւ Պրուսիայի միջուկում 23-ի Ռուսաստանի եւ Պրուսիայի միջեւ կնքուած պայմանագրով: Ի տարբերութիւն Վիեննայի թագաւորութեան առաջին եւ երրորդ բաժանումների, այս բաժանումը չէր մասնակցում Աւստրիան, որը զբաղւում էր Ֆրանսիայի հետ պատերազմով: Պրուսիային անցան Վիեննայի կոպուլակա կոչուած աշխարհագրական միաւորը, իսկ Ռուսաստանին՝ արեւելեան տարածքները, որ հիմնականում կենտրոնացուած էր Լեհահայոց համայնքը:

3 Հ. Մ. Վրո. Բժշկեան, Շանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայ կողման բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վեներիկ, 1830:
4 J. Reczek, Językowa polonizacja Ormian. „Język Polski”, (1987). A. Gawroński, Język Ormian Polskich, Encyklopedia Polska, t. III, dzial III, cz. II, s.